ԿԱՏԱՐՅԱԼ ՕՐԻՆԱԿ, ՈՐԻՆ ՊԵՏՔ Է ՀԵՏԵՎԵԼ

- *Հովհաննես 1-12 գլուխներն ընդգրկում են Հիսուսի հանրային ծառայության երեք տարիները, իսկ հաջորդ յոթ գլուխները (13-19) ընդգրկում են Նրա կյանքի միայն 24-36 ժամերը:*

- *Գլուխ 13-17-ը հայտնի է որպես «վերնատան դիսկուրս»:*

  Մարկոս 14.12-15 – Բաղարջակերաց տոնի առաջին օրը, երբ զատկական գառն էին մորթում, աշակերտներն ասացին Հիսուսին. Որտե՞ղ ես ուզում ուտել զատկական ընթրիքը, որ գնանք պատրաստենք: Հիսուսն աշակերտներից երկուսին ուղարկեց ու նրանց ասաց. Գնացե՛ք քաղաք, և ջրով սափորը ձեռքին մի մարդ կհանդիպի ձեզ. գնացե՛ք նրա հետևից: Եվ ուր որ մտնի, այդ տան տիրոջն ասե՛ք. "Վարդապետն ասում է. "Որտե՞ղ է այն օթևանը, որտեղ աշակերտներիս հետ պիտի ուտեմ զատկական ընթրիքը": Նա ձեզ մի մեծ վերնատուն ցույց կտա՝ հարդարված, պատրաստ. այնտե՛ղ կպատրաստեք մեզ համար:

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՀՈՎ. 13.1-20, 34-35

1 Հիսուսը, Զատկի տոնից առաջ իմանալով, որ հասել է իր ժամը այս աշխարհից Հոր մոտ փոխադրվելու, մինչև վերջ ցույց տվեց իր սերը նրանց հանդեպ, ովքեր այս աշխարհում են:

2 Եվ ընթրիքին սատանան արդեն Սիմոնի որդի Հուդա Իսկարիովտացու սրտի մեջ դրել էր, որ Հիսուսին մատնի: 3 Հիսուսը գիտեր, որ Հայրն ամեն ինչ իր ձեռքն էր հանձնել, և որ ինքն Աստծուց էր ելել ու Աստծու մոտ էր գնում. 4 Նա ընթրիքի սեղանից վեր կացավ, զգեստը հանեց ու մի սրբիչ վերցնելով՝ մեջքին կապեց: 5 Ապա կոնքի մեջ ջուր լցրեց ու սկսեց աշակերտների ոտքերը լվանալ և մեջքին կապած սրբիչով սրբել:

I. ՀԻՍՈՒՍԸ ԼՎԱՑ ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՏՔԵՐԸ – ԱՅՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ, ՈՎՔԵՐ ԼՔԵՑԻՆ ՀԻՍՈՒՍԻՆ:

- ***Հիսուսի համար ամենադժվարն այն էր, որ նա գիտեր, որ իր աշակերտները կլքեն իրեն, սակայն նա լվաց նրանց ոտքերը:***

  Հովհաննես 16.32 – Ահա ժամանակը գալիս է, և արդեն իսկ եկել է, երբ բոլորդ կցրվեք, յուրաքանչյուրը՝ իր տունը, և ինձ մենակ կթողնեք: Բայց ես մենակ չեմ, որովհետև Հայրն ինձ հետ է:

  Մատթեոս 26.56 – Բայց այս ամենը եղավ, որպեսզի իրականանան մարգարեների գրվածքները: Այդ ժամանակ բոլոր աշակերտները նրան թողեցին ու փախան:

  Մարկոս 14.50 – Եվ ամենքը նրան թողեցին ու փախան:

- ***Ձեզ երբևէ լքե՞լ են, այն պահին, երբ որևէ մեկի կարիքը շատ ունեիք: Ինչպե՞ս հաղթահարեցիք այդ: Իսկ ի՞նչ կասեք զգացմունքային/էմոցիոնալ լքվածության մասին:***

II. ՀԻՍՈՒՍԸ ԼՎԱՑ ՊԵՏՐՈՍԻ ՈՏՔԵՐՆ՝ ԱՅՆ ՄԱՐԴՈՒ, ՈՎ ՄԵՐԺԵՑ և ՈՒՐԱՑԱՎ ՀԻՍՈՒՍԻՆ:

37 Պետրոսն ասաց նրան... ես իմ կյանքը կտամ քեզ համար: 38 Հիսուսը նրան պատասխանեց. Ինձ համար կյանքդ կտաս. ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ. աքաղաղը դեռ չկանչած՝ դու ինձ երեք անգամ կուրանաս:

Մատթեոս 26.74-75 – Այդ ժամանակ նա սկսեց անիծել ու երդվել. Այդ մարդուն չեմ ճանաչում: Եվ իսկույն աքաղաղը կանչեց: Եվ Պետրոսը հիշեց Հիսուսի այն խոսքը. Աքաղաղը դեռ չկանչած՝ երեք անգամ կուրանաս ինձ: Ղուկաս 22:61-62 – 61 Տերը դարձավ, նայեց Պետրոսին. Պետրոսը հիշեց Տիրոջ խոսքը, որ ասել էր իրեն. Մինչև աքաղաղի կանչելը երեք անգամ ինձ կուրանասե: 62 Եվ Պետրոսը, դուրս ելնելով, դառնապես լաց եղավ:

6 Երբ Սիմոն Պետրոսին հասավ, նա ասաց Հիսուսին. Տեր, դո՞ւ ես իմ ոտքերը լվանում: 7 Հիսուսը պատասխանեց նրան ու ասաց. Այն, ինչ ես անում եմ, դու հիմա չես հասկանա, բայց այն հետո կհասկանաս:

8 Պետրոսը նրան ասաց. Դու իմ ոտքերը երբեք չես լվանա: Հիսուսը նրան պատասխանեց. Եթե քեզ չլվանամ, ինձ հետ բաժին չես ունենա: 9 Սիմոն Պետրոսը նրան ասաց. Տեր, ոչ միայն ոտքերս, այլ ձեռքերս ու գլուխս ևս լվա: 10 Հիսուսը նրան ասաց. Ով լվացվել է, ամբողջովին մաքուր է և կարիք չունի ոչնչի, բացի ոտքերը լվանալուց.

- ***Mikveh or mikvah***

  Միքվեն կամ միկվան բաղնիք է, որն օգտագործվում է Հուդայիզմի մեջ ծիսական նպատակով՝ մաքրության հասնելու համար: Ուղղափառ Հուդայականությունը հիմնականում հավատարիմ է դասական կանոններին և ավանդույթներին, և, հետևաբար, ուղղափառ հրեա կանանցից պահանջվում է ընկղմվել միքվեի մեջ սեռական հարաբերությունից հետո: Սա ներառում է հարսնացուները մինչև իրենց ամուսնությունը, իսկ ամուսնացած կանայք դաշտանից կամ ծննդաբերությունից հետո: Ըստ ուղղափառ կանոնների՝ տղամարդիկ և կանայք պարտավոր են ընկղմվել առանձին միքվեների մեջ կամ օգտագործել միքվեն տարբեր նշանակված ժամերին:

11 Քանի որ նա գիտեր իրեն մատնողին, դրա համար ասաց. Ոչ բոլորդ եք մաքուր: 12 Եւ երբոր նորանց ոտները լուացաւ, իր հանդերձներն առաւ՝ եւ դարձեալ սեղան նստեց եւ նորանց ասեց. Գիտէ՞ք ես ինչ արի ձեզ: 13 Դուք ինձ "Վարդապետ" և "Տեր" եք կոչում և ճիշտ եք ասում, որովհետև եմ: 14 Արդ եթէ ես Տէրս եւ Վարդապետս՝ ձեր ոտները լուացի, դուք էլ պէտք է իրար ոտները լուանաք: 15 Քանի որ ես ձեզ օրինակ ծառայեցի, որպեսզի ինչպես ես ձեզ արեցի, դուք էլ նույն կերպ անեք: 16 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. ծառան ավելի մեծ չէ, քան իր տերը, ոչ էլ ուղարկվածն է ավելի մեծ, քան իրեն ուղարկողը: 17 Եթե այս բաներն իմացաք, երանելի կլինեք, թե որ դրանք կատարեք:

17 Եթե այս բաներն իմացաք, երանելի կլինեք, թե որ դրանք կատարեք: 18 Ձեր բոլորիդ համար չեմ ասում. ես գիտեմ նորանց, որ ընտրեցի. բայց որ գրուածը կատարուի, թէ՝ Նա որ ինձ հետ հաց էր ուտում, ինձ դէմ իր կրունկը բարձրացրեց (Սաղ. 41.9):

III. ՀԻՍՈՒՍԸ ԼՎԱՑ ՀՈՒԴԱՅԻ ՈՏՔԵՐՆ՝ ԱՅՆ ՄԱՐԴՈՒ, ՈՎ ԴԱՎԱՃԱՆԵՑ ՀԻՍՈՒՍԻՆ:

- ***Հիսուսը լվաց Հուդայի կրունկը, ով բարձրացավ Նրա դեմ:***
  Սա է ճշմարիտ ոտնալվայի խորհուրդը, լվանալ այն կրունկը որ կբարձրանա քո դեմ:
  Ահա ինչու Հիսուսն ասաց. «Դուք չեք հասկանա, թե ինչ եմ անում հիմա, բայց հետո կհասկանաք»:

ՀԻՆԳ ԲԱՆ, ՈՐ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՀՈՒԴԱՅԻ ՄԱՍԻՆ.

1. ***Աստվածաշնչյան լավ ուսուցում ստանալը բավարար չէ:***

2. ***Հուդայի խնդիրը ոչ թե գիտելիքի պակասն էր, այլ հայտնությունը, որովհետև գիտելիքը գոռոզացնում է, իսկ սերը շինում է: Նա չէր սիրում Հիսուսին:***

3. ***Եկեղեցում կենում են և՛ ցորեն և՛ որոմ:***

4. ***Որտեղ քո գանձերն են, այնտեղ էլ կլինի քո սիրտը:***

   Հուդան Մարիամի ընծաները գնահատեց մոտ մեկ տարվա աշխատավարձով և դավաճանեց Հիսուսին՝ քահանաներից ստանալով ընդամենը 30 կտոր արծաթ:

5. ***Քո կյանքի ամենակարևոր օրը քո վերջին օրն է:***

34 Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրէք (agapaō). ինչպէս ես ձեզ սիրեցի (agapaō), որ դուք էլ իրար սիրէք (agapaō): 35 Դրանով բոլորը կճանաչեն, որ դուք իմ աշակերտներն եք, եթե միմյանց նկատմամբ սեր ունենաք:

VI. ՍԵՐՆ Է, ՈՐ ՄԵԶ ԴԱՐՁՆՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՍԻ ՃՇՄԱՐԻՏ ԱՇԱԿԵՐՏԸ, ԱՅԼ ՈՉ ԹԵ ԻՆՉ-ՈՐ ԾԵՍԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ:

Սերը երբեմն զգացմունք է, բայց այն միշտ գործողություն է:

1 ...իմանալով, որ հասել է իր ժամը այս աշխարհից Հոր մոտ փոխադրվելու, մինչև վերջ ցույց տվեց իր սերը նրանց հանդեպ, ովքեր այս աշխարհում են:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ